

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության 2016-17թթ. առցանց ուսանողական հարցման արդյունքները մասնաճյուղում պրակտիկայի կազմակերպման գործընթացի վերաբերյալ և 2014-16 թվականների արդյունքների հետ դրանց համեմատական ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

22.04.2017թ.

Օբյեկտիվ ճշմարտություն է այն, թե ցանկացած պետության կրթական համակարգ, ունենալով հարաբերական ինքնուրույնություն, յուրովի է կրում տնտեսակարգի, արտաքին ու ներքին քաղաքականությունների, մշակութային ավանդույթների ու իրողությունների ազդեցությունը: Բնականաբար դրանից անմասն չէ նաև Հայաստանի կրթական համակարգը, նրա առանցքային տարրերից մեկը՝ բուհական կրթությունը: Մասնավորաբար, հակասականորեն ձևավորվող մրցակցային շուկայական կյանքի պայմաններում նորովի է դրվում մասնագիտական կողմնորոշման, երիտասարդ կադրերի զբաղվածության, շրջանավարտ-գործատու համակարգի արդյունավետության հիմնահարցերը: Մույն համատեքստում արդեն ձևավորված քառամյա բակալավրական կրթության ուսումնական պլաններում, կրթական ծրագրերում «նոր կարգավիճակ» են ստանում ինչպես ուսումնական, այնպես էլ արտադրական-մանկավարժական պրակտիկաները:

Ընդհանրապես, պրակտիկաներն անփոխարինելի հնարավորություն են ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքների փորձարկման, մասնագիտական հմտությունների ստուգման, դրանք կատարելագործելու տեսանկյունից: Միաժամանակ, այստեղ ճշգրտվում և պլանավորվում են ավարտական աշխատանքի ուղղվածությունն ու բովանդակությունը, նախադրյալներ են ստեղծվում ինչպես հետբուհական հետագա կրթության հնարավորությունների, այնպես էլ ապագա աշխատանքային գործունեության համար:

Պրակտիկան ուսման կազմակերպիչների, ապագա շրջանավարտների ու գործատուների շահերի խաչման յուրատեսակ կիզակետ է, սեփական գործունեության արդյունավետության գնահատման ու ինքնագնահատման լավագույն հնարավորություններից մեկը: Մասնագիտական ամբիոնն ու սպասարկող անձնակազմը գնահատում են մատուցած կրթական ծառայությունների արդյունավետությունը, հնարավոր գործատուները՝ ապագա աշխատակիցների մոտ անհրաժեշտ որակների առկայությունը: Եթե ասվածին ավելացնենք, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը գտնվում է սահմանային գոտում մի պետության, որը հարևան պետության հետ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակում է, որ ուսանողների մի սովոր հատված սահմանային բնակավայրերից են, որոնք պարբերաբար ուբակոծվում են կամ անընդհատ այդ վտանգի տակ են, որ, չնայած պատկան մարմինների գործադրած մեծ ջանքերին տարածաշրջանում աշխատանքի տեղավորվելն ավելի խնդրահարույց է, թերևս ավելի ըմբռնելի ու ընդունելի կդառնա այն իրողությունը, թե ինչու է մասնաճյուղի ղեկավարությունն առանձնակի կարևորում արդյունավետ պրակտիկայի հետ կապված խնդիրները: Այն «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի մասնաճյուղում ձևավորված նոր ինստիտուտի գործունեության կարևորագույն բաղադրամասերից է, ինստիտուտ, որի գոյության իմաստը ժամանակակից կրթական մարտահրավերներին ավելի արդյունավետ դիմակայելն է:

Այս նկատառումներից ելնելով՝ ՄԿՈԱ բաժինը 4-րդ տարին է ինչ մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների շրջանում պարբերաբար անց է կացնում հարցումներ, պարզելու, թե ապագա մասնագետները որքանով են բավարարված պրակտիկայի կազմակերպման գործընթացից:

Հայտնի է, որ **ժամանակակից գործատուների պահանջներն** ապագա աշխատակիցների հատկանիշների վերաբերյալ, շատ հարցերում էապես տարբերվում է նախկին պահանջներից: **Նախ**, խորհրդային համակարգում մասնագետների աշխատանքի տեղավորման խնդիր, նրա ժամանակակից ըմբռնումով, գործնականում գոյություն չուներ:

Բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որոնցում էական է նաև Հայաստանի ու տարածաշրջանի յուրահատկությունների ազդեցությունը, մասնագետ-գործատու համակարգը լիարժեքորեն ձևավորվելու ու կատարելագործվելու համար դեռևս «երկար ճանապարհ» ունի անցնելու: Այս բացը լրացնելուն են ուղղված կրթօջախներում, այդ թվում մասնաճյուղում ստեղծված «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն»-ների գործունեությունը, ինչը սակայն նույնպես բազմաթիվ, այդ թվում դժվարագույն խնդիրների առջև է կանգնած: Մասնավոր սեփականությունը, ազատ մրցակցային շուկայական կյանքը սույն հարցում դեռևս թույլ է տալիս բազմաթիվ «կամայականություններ» գործատուների կողմից, ինչի կառավարելիությունն ու կարգավորվածությունը մինչ այսօր խնդրահարույց է: Մի իրողություն, որը, թեկուզև անուղղակիորեն, սակայն որոշակի ազդեցություն ունի նաև կրթամասնագիտական աշխատաշուկայի վրա: Ամեն դեպքում, «կյանքը շարունակվում է» և պրակտիկայի արդյունավետության վերաբերյալ տարեց-տարի ուսանողների և գործատուների կարծիքների իմացությունը թույլ է տալիս հետևել սույն ոլորտում տրամադրությունների ու իրողությունների դինամիկային:

Ներկայացնենք 2016-17 ուստարում մասնաճյուղից բավարարվածության *առցանց* ուսանողական հարցման պրակտիկայի կազմակերպման գործընթացին վերաբերող հարցերին ուսանողների տված ***ընդհանրական գնահատականներն*** ու 2014-17թթ. անցկացրած նման հարցումների արդյունքների հետ դրանց ***համեմատական վերլուծությունը***:

2016-17թթ. հարցմանը մասնակցել են մասնաճյուղի 2-ից 3-րդ կուրսի **առկա ուսուցման** բոլոր ուսանողները (բացառությամբ 4-րդ կուրսերի, նրանք պրակտիկային վերաբերող հարցերին պատասխանել են մասնաճյուղում ուսումնառությունից բավարարվածության հարցման շրջանակներում, իսկ 1-ին կուրսեցիները պրակտիկայի չեն մասնակցել), հետևաբար պրակտիկային վերաբերող հարցերին պատասխանել են մանկավարժական և արտադրական պրակտիկա անցած բոլոր ուսանողները, այսինքն այն կրել է համատարած բնույթ, ինչի պատճառով այստեղ ներկայացուցչության հարց չի դրվել:

Եվ ***ուշադրություն ենք հրավիրում*** այն փաստի վրա, որ 2017թ. հարցումն իրականացվել է առցանց, որն ուսանողներին տվել է ազատ և անկաշկանդ արտահայտվելու և գնահատելու հնարավորություն՝ նշելով միայն ֆակուլտետը, ինչը փորձագետներին անհրաժեշտ էր հարցման արդյունքներից ելնելով խնդիրներն առանձնացնել և գնահատել ըստ պատկանելիության:


2017թ. առցանց հարցման պրակտիկայի կազմակերպման գործընթացին վերաբերող հարցերին պատասխանել է 155 ուսանող.

Ֆակուլտետ	Ուս.թիվը
Բնական գիտությունների (ԲԳՖ)	24
Հումանիտար գիտությունների (ՀԳՖ)	67
Տնտեսագիտության (ՏԳՖ)	38
Կիրառական արվեստի (Կ/ԱՖ)	26
Ընդամենը	155

Հարցաշարում ընդգրկվել են այն հարցերը, որոնք, ըստ մասնագետների, գործնականում սպառում են պրակտիկայի գաղափարի, դրա կազմակերպման և անցկացման ու դրանց հանդեպ ուսանողների վերաբերմունքի գունապնակը: Մասնավորաբար, դրանք վերաբերվում են պրակտիկայի անցկացման տեղին, ժամանակահատվածին, տևողությանը, ընդունող կազմակերպության վերաբերմունքին, պրակտիկայի ղեկավարների արհեստավարժությանը, սեփական գիտելիքների և հմտությունների իրացման գնահատականներին, ակնկալիքների արդարացմանը:

Հարցման արդյունքներն ամփոփվել են և վերլուծվել ըստ բոլոր մասնագիտությունների՝ ինչպես 5-բալանի սանդղակով գնահատված միջին բալերով, այնպես էլ բացարձակ թվերով և տոկոսներով՝ ընդհանուր քանակության հետ համեմատած: Այդ գնահատականները ցույց են տալիս, որ, ընդհանուր առմամբ մասնաճյուղում ուսանողության հասարակական կարծիքի մեջ պրակտիկայի կազմակերպումը և արդյունավետությունն ունեն բարձր գնահատական. և՛ պրակտիկային կազմակերպման բաղադրատարրերը, և՛ նրա արդյունավետության բնորոշիչները 5 բալանի սանդղակում ստացել են «4» և ավելի գնահատական:

Փաստենք, որ այստեղ նույնանման չպետք է ընկալել վիճակագրական միջին բալերը և բացարձակ թվերն ու ընդհանուրի հետ համեմատած տոկոսները:




Իրոք, **4,01; 4,08; 4,12; 4,18** միջին գնահատականներն առաջին հայացքից կարող են հոգեբանորեն շատ բարձր չընկալվել: Բայց նույն տվյալները երբ դիտարկում ենք բացարձակ արժեքների տեսանկյունից, տեսնում ենք, որ, օրինակ, պրակտիկայի անցկացման վայրից բարձր գոհունակություն են արտահայտել 153 ուսանողից՝ 114-ը (այսինքն, 4 ուսանողից՝ 3-ը), ընդունող կազմակերպության աջակցությունից՝ 145-ից 112-ը (այսինքն, գրեթե 5-ից՝ 4-ը), պրակտիկայի տևողությունից՝ 154-ից 119-ը (տորից գրեթե 5-ից՝ 4-ը), անցկացման ժամանակահատվածից՝ 153-ից՝ 121-ը (79,1%-ը ընդհանուր թվի հետ համեմատած, այսինքն 5-ից՝ 4-ը):

Արդեն հոգեբանորեն նույն տվյալների նման ներկայացումն իրավամբ ավելի դրական լույսի տակ է ընկալվում: Այն ավելի ակնհայտ է մյուս բաղադրիչների գնահատականներում: Այսպես, օրինակ, պրակտիկա անցած 10 ուսանողից 9-ը ղեկավարների աշխատանքը գնահատել է «բարձր» և «շատ բարձր»: 10-ից 8-ը այդպես է գնահատել պրակտիկայի ծրագրի իրականացումը, կազմակերպման գործընթացը և անցկացման ժամանակահատվածը:


Որքանով բավարարեց պրակտիկայի.	չ/պ	Գնահատական					Ընդ.	4 և 5 գնահ.	
		1	2	3	4	5		քան.	%
կազմակերպման գործընթացը	0	1	7	22	43	82	155	125	80,6%
անցկացման վայրը	2	10	10	19	43	71	153	114	74,5%
անցկացման ժամանակահատվածը	2	5	9	18	42	79	153	121	79,1%
տևողությունը	1	7	10	18	41	78	154	119	77,3%
ծրագրի իրականացումը	4	7	6	15	51	72	151	123	81,5%
ընթացքում ընդունող կազմակերպության աջակցությունը	10	8	6	19	46	66	145	112	77,2%
ղեկավարի աշխատանքը	6	3	5	10	29	102	149	131	87,9%
վայրի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքները	7	4	4	14	38	88	148	126	85,1%


Բալային միջին գնահատականները, սխալանքի հաշվառմամբ (0,2 բալ) որակապես ավելի բարձր են, կապված պրակտիկայի արդյունավետության հետ: Հոգեբանորեն, ապագա մասնագետն առանձնակի է կարևորում իր հանդեպ պատասխանատուների վերաբերմունքը: Եվ հատկանշական է, որ ամենաբարձր միջին գնահատականը (4,61) այստեղ ստացել է պրակտիկայի ղեկավարի քաջալերանքը, այն, ինչ սեփական ունակությունները դրսևորելու հարցում լրացուցիչ ուժ է հաղորդում ուսանողին:



Ուսանողները բարձր ինքնագնահատական են տվել պրակտիկայի ընթացքում նոր հմտություններ ու կարողություններ ձեռք բերելու սեփական ջանքերին (4,40 բալ), մասնաձյուղում ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական

գիտելիքների, յուրացված մեթոդների օգտագործմանը (4,31; 4,31 բալ՝ համապատասխանաբար), մասնագիտական հմտությունների ու կարողությունների դրսևորմանը (4,30 բալ): Փոքր ինչ պակաս, բայց սխալանքի շրջանակներում են (հետևաբար, վիճակագրորեն նույն կարգի) նաև նոր մեթոդների յուրացման (4,19 բալ) և ակնկալիքների արդարացման (4,16 բալ) գնահատականները:







Մրանք ինքնին շատ բարձր վիճակագրական գնահատականներ են: Սակայն, ավելորդ չենք համարում նորից նշելու, որ այս նույն բալերը, ներկայացված բացարձակ թվերով կամ տոկոսներով, էլ ավելի են ավելացնում գնահատականները: Այսպես, օրինակ, պրակտիկայի ղեկավարի վստահությունն իրենց հանդեպ **«շատ բարձր» ու «բարձր»** են գնահատել 20 պրակտիկանտից՝ 19-ը, նոր մասնագիտական որակներ ձեռք բերելու սեփական ջանքերը՝ 20-ից 18-ը: Միալանքի շրջանակում 20-ից 17 ուսանող այդպես է գնահատել պրակտիկայի համար անհրաժեշտ տեսական գիտելիքները, մասնագիտական հմտություններն ու կարողությունները, ուսումնառության ընթացքում յուրացված մեթոդները: Եվ վերջապես, 10-ից 8 ուսանող բարձր գնահատական է տվել պրակտիկայի ընթացքում նոր մեթոդների յուրացմանն ու սեփական ակնկալիքների արդարացմանը:

<i>Բավարարվածությունը պրակտիկայի արդյունավետությունից</i>	Հ/Կ	Գնահատական					Ընդ.	4 և 5 գնահ.	
		1	2	3	4	5		քան	%
Որքանո՞վ Ձեր տեսական գիտելիքները բավարարեցին ակտիվ պրակտիկայի ընթացքում	8	3	3	17	46	78	147	124	84,4%
Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը	13	4	2	17	43	76	142	119	83,8%
Որքանո՞վ էին ուսումնառության ընթացքում յուրացված մեթոդները նպաստում պրակտիկայի անցկացմանը	15	3	4	12	48	73	140	121	86,4%
Որքանո՞վ պրակտիկան նպաստեց նոր մեթոդների յուրացմանը	16	6	5	18	38	72	139	110	79,1%
Որքա՞ն էր պրակտիկայի վայրի ղեկավարը վստահում Ձեզ	15	5	0	2	31	102	140	133	95,0%
Գնահատե՞ք պրակտիկայի ընթացքում նոր հմտությունների և կարողությունների ձեռք բերման Ձեր ջանքերը	18	1	3	13	43	77	137	120	87,6%
Որքանո՞վ արդարացվեցին Ձեր ակնկալիքները պրակտիկայից	12	5	5	18	49	66	143	115	80,4%


Սույն համատեքստում փորձենք համեմատել 2017թ. հարցման արդյունքները նախորդ 2 ուստարիների նմանատիպ հարցումների արդյունքների հետ, միաժամանակ հիշեցնելով, որ

2017թ.-ի հարցումն ի տարբերություն նախորդների, իրականացվել է **անցանց**, և այդ տարվա արդյունքներն ըստ էության ակնկալվել են համեմատաբար ցածր:

Նշենք երեք փաստ-հանգամանք: **Նախ**, համեմատելով 2014-2017թթ. անցկացված հարցումների տվյալները, ֆիքսում ենք, որ, **որակապես նվազել է** ուսանող-պրակտիկանտների բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպումից (4,69 միջին գնահատականից դարձել է 4,28), իրականացումից (4,52-ից դարձել է 4,19), անցկացման վայրից (4,59-ից դարձել է 4,01), մասնավորապես նաև պրակտիկայի ղեկավարման գործընթացից, օրինակ, բուհից նշանակված ղեկավարի գնահատականը 4,95-ից դարձել է 4,49, պրակտիկայի վայրի կողմից նշանակված ղեկավարին՝ 4,76-ից դարձել է 4,36, պրակտիկանտի հանդեպ ղեկավարի վստահությունը՝ 4,85-ից դարձել է 4,61: Ուսանողները մասամբ դժգոհ են նաև պրակտիկանտներին ընդունող կազմակերպության աջակցությունից:



Երկրորդ, սույն համատեքստում կարևորենք հետևյալ հանգամանքը: **Գործատուները**, ի տարբերություն ուսանողների, **պրակտիկայի կազմակերպման գործընթացը** բոլոր այս հարցումների ընթացքում գնահատել են շատ բարձր (երեք հարցումների ընթացքում միջին վիճակագրական արժեքը կազմել է 4,7 բալ):




Երրորդ, 2016-17 ուստարվա շրջանավարտները պրակտիկայի օգտակարությունը գնահատել են **4,39** միջին բալով, ընդ որում հարցմանը մասնակցած 160 շրջանավարտներից 133-ը

այն գնահատել է 4 և 5 գնահատականներով, ինչը միգուցե բավարարվածության շատ բարձր մակարդակ չէ, սակայն վատ էլ չէ:

Ուսանողների մոտ բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպման գործընթացից նվազել է, 2016-17 ուստարում նրանց տված **4,3 միջին գնահատականն** ըստ էության ցածր գնահատական չէ, սակայն նախորդ տարիների ֆոնի վրա նվազումը մասնաճյուղի ղեկավարության համար պրակտիկայի հետ առնչվող խնդիրների նորովի լուծումներ է առաջ քաշում:


Ուսանողներն ակնկալում են բուհ-գործատու հարաբերություններում ուսանողների համար շահավետ և արդյունավետ գործունեություն ապահովելու երաշխիքներ: Իրենց գնահատականներով նրանք բարձրաձայնում են նաև բուհի և գործատու կազմակերպության ուսումնական պլանների, բուհում ուսանողների ձեռքբերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների և գործատուների պահանջների համապատասխանեցման մասին, մասնավորապես մանկավարժական պրակտիկայի շրջանակներում նրանք ակնկալում են, որ բուհում սովորած մեթոդները կիրառելի լինեն գործնականում և պրակտիկայի ընթացքում բարելավվեն դրանք, և նունիսկ ձեռք բերեն դասավանդման և ուսումնառության ավելի նոր ժամանակակից մեթոդներ:



Ի հակադրումն ուսանողների, օրինակ, մի հարցման մեջ արտաքին շահակիցները բարձր գնահատական են տվել մեր ուսանող-պրակտիկանտների տեսա-գործնական գիտելիքներին, աշխատանքային կարողություններին: 2017թ. անցկացված համապատասխան հարցման մեջ, զուտ մանկավարժական պրակտիկա անցած մեր ուսանողներին արտաքին շահակիցների կողմից (հարցմանը մասնակցել է 54 արտաքին շահակից-փորձագետ) բարձր միջին բալով գնահատվել է «տեսական գիտելիքների իմացությունը»՝ (**4,81** բալ, ուսանողների 4,31 միջին գնահատականի կողքին) և «թիմում աշխատելու հմտությունները» (**4,74** բալ), այնուհետև, «գործնական հմտությունները» (**4,61** բալ), «դասավանդման ժամանակակից մեթոդները կիրառելու կարողությունը» (**4,62** բալ, ուսանողների 4,31 միջին գնահատականի կողքին) և «մասնագիտական խոսքը» (**4,63** բալ): Այսինքն, ստացվում է ուսանողներն ավելի պահանջկոտ են իրենք իրենց նկատմամբ, միգուցե ավելի լավ են զգում իրենց թերացումները, իսկ ինչ կարողանում են դրսևորել, դա, այնուամենայնիվ, բավարար է համարվում գործատուների կողմից և արժանանանում է բարձր գնահատականների:

Նույն հարցման մեջ արտաքին շահակիցները բարձրագույն գնահատական են տվել մեր ուսանող-պրակտիկանտների բարեկրթությանը, էթիկայի նորմերին հետևելուն, միջին գնահատականը՝ 4,94: Եվ սա իրազեկներն ընկալում են որպես օրինաչափություն: Քանի որ, ով փոքր-ինչ ծանոթ է մասնաճյուղի անցուդարձին, տվյալ երևույթի հանդեպ ղեկավարության ու աշխատակազմի վերաբերմունքին, ուսանողների գերակշիռ մասի կեցվածքին, նման գնահատականները կրնակալի որպես բնական և իրականությանը համապատասխանող: Անզեն աչքով էլ երևում է, որ մասնաճյուղի ուսանողությունը, առավել ևս բարձր կուրսեցիները, որոնք երրորդ տարին է կրթվում ու ինքնակրթվում են համալսարանական միջավայրում, աչքի են ընկնում ոչ շինծու համեստությամբ, պարկեշտությամբ, անթաքույց հարգանքով մեծի, դասախոսի, ղեկավարի հանդեպ:

Բարձր են նաև ուսանող-պրակտիկանտների պահանջները գործատու կազմակերպություններից: Նրանք անկեղծորեն գտնում են, որ մասնագիտական նոր կարողություններ և հմտություններ ձեռք բերելու իրենց ջանքերն առավել շատ չեն, ինչը խոսում է նաև նրանց թերացումների մասին:




Ստացված տվյալներից որոշակի անաչառ ու ընդհանրական հետևությունների համար թերևս կարևոր է նշել նաև հետևյալ ակնհայտ հանգամանքները. ոչ բոլոր ուսանողներն են սովորում գերազանց առաջադիմությամբ, հետևաբար՝ իդեալականորեն տիրապետում ներկայացվող որակներին, ոչ բոլոր արտաքին շահակիցներն են իրապես ընդունակ մասնաճյուղի ուսանողների ներկայացված հատկանիշները գնահատել համարժեքորեն: Այսինքն, հետևությունները պետք է ընկալել համեմատական իմաստով և որոշակի վերապահությամբ: Սակայն դա չի փոխում ընդհանրացված գնահատականը: Այն է. ***Տավուշի մարզի շրջանակներում արտաքին շահակիցները համարում են, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները պրակտիկայի ընթացքում հիմնականում դրսևորել են ապագա մասնագետին բնորոշ բարձրագույն որակներ:*** Ամենաբարձր մակարդակի վրա են եղել էթիկայի նորմերին նրանց հետևելը, դասավանդվող առարկաների վերաբերյալ տեսական գիտելիքները, համատեղ աշխատանքի նրբություններին տիրապետելը, դասապրոցեսին ստեղծագործաբար վերաբերվելը, «քոմփյութերային» մշակույթը: Պատշաճ աստիճանի է եղել նաև մասնագիտական խոսքը, դասավանդման ժամանակակից մեթոդների իմացությունը, գործնական հմտությունները:

2017 թվականին պրակտիկա անցած ուսանողների համատարած հարցման ընդհանրական արդյունքները, դրանց համեմատությունը նախորդ հարցումների տվյալների հետ, ուսանողների և արտաքին շահակիցների գնահատականների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ ԵՊՀ

Իջևանի մասնաճյուղը ուսումնաստության ընթացքում կարողացել է ապագա մասնագետների մեջ պատշաճորեն «ներարկել» աշխատաշուկայի պահանջներին բավարարող այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք ուսանողները դրսևորում են արտադրական ու մանկավարժական պրակտիկաների ընթացքում: Փաստենք նաև, որ իր տրամաբանությունն ունի նաև մասնաճյուղից նշանակված ղեկավարին, պրակտիկայի վայրի պատասխանատուին և ողջ այդ գործընթացը կազմակերպելուն ուսանողների տված հարաճուն բարձրագույն գնահատականները, իրականում ամենաբարձրը՝ մյուս բաղադրատարրերի համեմատությամբ: Սրանք բաղադրիչներ են, որոնցում առավելագույնս գերակայված է մասնաճյուղի դերը: Հետևաբար կարելի է վիճակագրորեն փաստել, թե սեփական լիազորությունների շրջանակում, պրակտիկայի կազմակերպման ու անցկացման ոլորտում մասնաճյուղում իրագործվել են այնպիսի գործընթացներ (համապատասխան ղեկավարների ընտրություն, միջոցառումների պլանավորում, պրակտիկայի վայրի պատասխանատուների հետ համագործակցության կատարելագործում), որոնք ուսանողության գիտակցության մեջ առաջացրել են հարաճուն գոհունակության զգացողություն:

Պրակտիկայից վիճակագրական տպավորությունն ամբողջացնելու նպատակով անդրադառնանք այն փոքրաքանակ «բավարար» ու «ցածր» գնահատականներին, որոնք տրվել են 1-2 բաղադրիչի:

Այսպես, 2017թ. հարցման մեջ պրակտիկայի անցկացման վայրի օգտակարության գնահատականներում 4-ից 1-ը նշել է «բավարար» կամ «ցածր» գնահատականներ: Ստատվորապես նույն քանակությամբ պրակտիկանտներ այդպես են գնահատել նաև պրակտիկայի տևողությունը: 2014-2016 թվականներին անցկացված հարցումներում պրակտիկայի տևողությանը նման գնահատական են տվել 5 պրակտիկանտից՝ 1-ը:



Երբ նայում ենք այս տվյալներին մասնագիտությունների կտրվածքով, ապա, օրինակ տեսնում ենք, որ անցկացման ավելի համապատասխան վայր են ցանկացել Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները (միջին բալլ՝ 3,46), ավելի երկար տևողությամբ՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի առավելապես մանկավարժական մասնագիտությունների ներկայացուցիչները (միջին բալլ՝ 3,94): Կարծում ենք նման ցանկություններն ավելի շատ բնական են, քան՝ հնարավոր: Արվեստի բնագավառի մասնագետները, հատկապես առաջադիմողներն ու ավելի շնորհալիները, ցանկանում են, որ այն անցկացվի առաջադիմական արվեստանոցներում, մանկավարժական բնույթի մասնագիտությունների ներկայացուցիչները, որոնք, թերևս առաջին անգամ պրակտիկայի ընթացքում զգում են դասավանդման հմայքն ու դժվարությունները, ավելի շատ են ցանկանում,

որ այն ավելի երկար տևի: Կա նաև մեղալի հակառակ կողմը: Մույն առնչությամբ ցանկանում ենք անդրադառնալ մի կարևոր նկատառման:

Ինքը, հասարակական կարծիքը, սոցիալ-հոգեբանական երևույթ է: Գիտականորեն հիմնավորված հարցումների գլխավոր նպատակը հնարավորինս նրա օբյեկտիվացումն է, ինչը հնարավորություն կտա այս կամ այն կերպ հաշվի առնելու կառավարչական և կազմակերպչական գործունեության մեջ: Այդուհանդերձ, միշտ պետք է հաշվի առնենք սուբյեկտիվ բաղադրիչի առկայության հանգամանքը՝ նաև խմբի մակարդակով: Եթե նույնիսկ շրջանցենք այն հանգամանքը, որ իրականում իդեալական հարցումներ չեն լինում, միևնույն է, այնպիսի անանձնական երևույթ, ինչպիսին պրակտիկայի տևողությունն է, նույն մասնագիտության տարբեր կուրսերի ուսանողների կողմից չպետք է աչքի ընկնող որակական տարբեր գնահատականներ ունենա: Մինչդեռ, 2016 թվականին անցկացված մեր հարցման մեջ «Մասնավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 19 ուսանողից պրակտիկայի տևողությունը շատ բարձր են գնահատել՝ 9-ը, բարձր՝ 9-ը, և միայն մեկ ուսանող գնահատել է՝ բավարար: Իսկ ահա նույն մասնագիտության 3-րդ կուրսի 7 ուսանողներից շատ բարձր և շատ ցածր չի գնահատել ոչ մեկը, 2-ը գնահատել են՝ բարձր, 3-ը՝ բավարար, 2-ը՝ ցածր:

Ուսումնական գործընթացը, այդ թվում և, հատկապես, պրակտիկայի անցկացման ժամանակահատվածն ու տևողությունը ուսումնական պլաններում ունեն բավական կոշտ ժամանակագրական հնարավորություններ, ինչն էապես «նեղացնում է» ուսանողների անհատական ցանկությունները կատարելու հնարավորությունը: Էլ ավելի դժվար է պրակտիկայի անցկացման վայրի «իդեալականացումը»: Օրինակ, տարբեր մասնագիտությունների բարձր կուրսեցիների հետ «Ֆոկուս-խմբերի» մեթոդի օգնությամբ 2016-17թթ. ընթացքում անցկացված հետազոտության մեջ, որոշ շահախնդիր ու առաջադիմող ուսանողներ ցանկանում էին պրակտիկան անցնել ոչ միայն դպրոցներում, այլև՝ բանկերում, տուրիստական կենտրոններում (խոսքը օտար լեզուների ապագա ուսուցիչների մասին է): Ցանկությունը միգուցե բարի է, սակայն դժվար է (եթե ոչ՝ անհնար) դրա իրագործումը, քանի որ այստեղ գումարվում է նյութական ռեսուրսների հնարավորությունները (տվյալ կամ ուրիշ մարզերի հիմնարկություններում պրակտիկան անցնելու, կենցաղային հարցերը լուծելու հետ կապված նյութա-ֆինանսական ծախսեր, գործատու հիմնարկության գործունեության ոչ պլանային վերակազմավորման խնդիրը՝ կապված պրակտիկայի ժամանակահատվածի հետ և այլն): Թերևս նման դեպքերում մնում է կազմակերպչորեն որոշակի մասնագիտության կամ կոնկրետ ուսանողների հետ բացատրական աշխատանք կատարել, եթե տվյալ հարցում նրանց ցանկությունը կատարելն անհնար է կամ՝ նպատակահարմար չէ:

Բացառված չէ այստեղ նաև ուսանողների մի որոշակի հատվածի «գայթակղության» գործոնը: Ի վերջո, պրակտիկան ավելին է, քան պարզապես դասապրոցեսը, այստեղ, թերևս ավելի քիչ ժամանակ են անցկացնում դասավանդման գործընթացների մեջ, շատ ավելի ազատ են հաղորդակցություններում: Այնպես որ, պրակտիկան, ուսանողների մի մասի կողմից կարող է գնահատվել որպես «հանգիստ կամ արձակուրդ», ինչը շատ ավելի ցանկալի է հատկապես նրանց համար, ովքեր այդքան էլ մեծ ձգտում կամ նվիրում չունեն մասնագիտական որակներով ինքնաստուգվելու և զարգանալու: Ամեն դեպքում պրակտիկայի կազմակերպման ու անցկացման հետ կապված նմանօրինակ հարցերում իրազեկվածության մեծացումը թերևս ավելի կարևոր է և հնարավոր, քան սահմանափակ ժամանակագրական ու նյութա-տնտեսական ռեսուրսների պայմաններում կազմակերպչական ու փոխգործակցության տարրերի փոփոխությունը:

Ընդհանրացնելով 2014-17 թթ. մասնաճյուղի պրակտիկա անցած ուսանողության շրջանում համատարած հարցումների արդյունքները կարող ենք ամրագրել, որ.

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկա անցած ուսանողության հասարակական գիտակցության մեջ գերիշխում է այն կարծիքը, թե առկա օբյեկտիվ հանրապետական ու տարածաշրջանային բնույթի դժվարությունների առկայության պայմաններում, բուհի և պրակտիկայի անցկացման վայրի պատասխանատուներն այն կազմակերպում են բարձր մակարդակով, ինչը գործնականում լիարժեք հնարավորություն է ընձեռում փորձարկելու և դրսևորելու ուսման տարիներին ձեռք բերած մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները;

- Ընդհանուր գոհունակության ֆոնին, պրակտիկայի անցկացման ժամանակագրական բաղադրիչները (պրակտիկայի տևողությունը, անցկացման վայրը, ժամանակահատվածը), ինչպես նաև տվյալ գործընթացի պատասխանատուների հետ հարաբերությունները կարիք կա դարձնել ավելի օպտիմալ և արդյունավետ: Քանի որ նման բաղադրիչների փոփոխման հնարավորությունն ունի ընդգծված սահմանափակություն, նման պայմաններում պրակտիկաների գոհունակության մեծացման հարցում ավելի է կարևորվում իրազեկման գործոնի դերը:

Ելնելով վերոնշյալից **առաջարկվում է.**

- Հարցման արդյունքների մասին իրազեկել մասնաճյուղի հանրությանը, հրապարակելով կայքում և ֆակուլտետային ու ամբիոնային նիստերում, ինչը սեփական գործունեության ինքնագնահատման կարևոր փաստ է,

- Ուսումնամեթոդական վարչության, «Կրթական ծրագրի պատասխանատու»-ների, մասնագիտական ամբիոնների լիազոր ներկայացուցիչների հետ քննարկել պրակտիկաների անցկացման ժամանակացույցի օպտիմալության, փոփոխման ենթարկելու հնարավորությունները, կարելվույն հաշվի առնելով մասնագիտությունների յուրահատկությունները;

- Նման փոփոխման անհնարինության կամ անօգտակարության հիմնավորման դեպքում առանձնակի քննարկել և միջոցառումներ մշակել, կապված այդ մասին պրակտիկանու- ուսանողների իրազեկության բարձրացման հետ:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին